280 *Եւ ազգ[ք][1] են նոքա[2] քառասուն եւ երեք[3]. յորոց մինն է Ձկնակեր, եւ մինն՝ Կաթնկեր, եւ մին է Հեռիբացիս, որ է Հրեաւ[4] աշխարհն, զոր Պարսից հանեալ է ի նոցանէ։* 281 *Եւ զայլ ազգ այս է[5] խուժական անուամբ, զոր չէ հարկ ասել, զի այժմ այլազգ ոչ գիտեմք, բայց միայն զԲուշխն ազգ, որ ճարակի զերկիրն զայն։* 282 *Եւ ունի Սկիւթիա լերինս եւ դաշտս՝ անապատս* [35ա] *եւ անջուր։* 283 *Ունի աշխարհս հինգ[6]. զՍոգդիանի[7], որ է Սագաստան, եւ զՍակէ, ընդ երկուսին[8] են ազգ հնգետասան[9]՝ հարուստք, արուեստաւորք, վաճառականք, որ բնակեն ի մէջ Թուրքաստանի եւ Արեաց, [առ][10] Եմաւոն լերամբն։* 284 *Որ է բարձր եւ երկայն՝ քան զամենայն լերինս, եւ ձեւով՝ [որ]պէս[11] կակիկոն[12] եւ որպէս զԼի[ւ]ն[13] գիր Հա[յ]ոց, որ ունի արմունկն յարեւելից հարաւակոյս. եւ բազուկ մի ձգէ ի մուտս կոյս՝ մղոնս հազար երկու հարիւր ութսուն[14], եւ զմին բազուկն՝ ի հիւսի՛ս, մղոն[ս][15] հազար հինգ հարիւր յիսուն[16], եւ այլ եւս երթա[յ] ընդ Անծանաւթ երկիր։* 285 *Բայց երեքհարիւր[17] մղոնաւ յարմ[ն]կանէն[18] ըստ հիւսի՛սո[յ][19], ի վերա[յ] լերինն ճանապարհ եւ աւթեւան է՝ որք[20] ի Ճէնս[21] երթան, գալով ի Սագաստան՝ա[յ][22]՝ ճանապարհորդել ընդ Քարէ բուրգն, որ ի Զարմանալի դաշտին է։* 286 *Եւ ի հնգետասան[23] ազգաց կոչի մին Մասագետացիք, յորոց դշխոյն՝ որ զԿիւրոսն եսպան, եւ Բխուխ[24] ազգն, եւ միւս ազգ՝ Խորոզմի՝ վաճառականք, ի հիւսի՛սո[յ][25] յարեւմու[տ]ս[26], եւ ի նոսա լինի Խոլոզմի կարն[27]՝ ի Տոտ[28] գաւառի նոցա, եւ աղեղն ազնիւ. եւ միւս ազգ՝ Ծաւդիկք[29], եւ միւս ազգ՝ Թուխարիք։* 287 *Բայց ի քառասուն եւ երեք[30] ազգէդ[31] մին Հեփթաղք[32] եւ մին Ալխոն եւ միւսն Վալխոն՝ ըստ հոմանուն քաղաքացն՝ առ մեծ գետովն, որ կոչի Ռումոս[33]. եւ այլ եւս տասն[34] գետ[ք][35] ի լերանց նոցա հոսին։*

---

1 *V* ազգ *փխ* ազգք *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

2 *S* նորա *փխ* նոքա *(V)*

3 *V* ԽԿ

4 *V* Հրէօ *[օ-ի վրայ կայծակնաձեւ նշանով]*, *S* Հրեաւ *փխ* Հրեաւ *(վեր., հմմտ. նախ. Ե.271, 274)*

5 *S* ասէ *փխ* այս է *(V)*

6 *V* Ե

7 *Այս բառերի տողից* («եւ անջուր ... Սագաստան») *աջ, լուսանցքում նկարուած է ծանօթ կարմիր ոլորազարդը, որը ստորեւ կրկնուած է* «աւ/թեւան է ... Սագաստան/եա[յ]» *տողից վեր եւ* «Մասագետացիք ... զԿիւրոսն եսպ/ան» *տողի կողքին*

8 *V* Էրկուսին *փխ* երկուսին *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Ե → Է***)*

9 *V* ԺԵ

10 *V չիք* առ *(վեր. Սուքրեանի՝ ըստ բովանդակութեան. տե՛ս* **առ** ... լերամբն*)*

11 *V* Պ *[=«պէա»] փխ* որպէս *(վեր. Սուքրեանի)*

12 *S* կարակին *փխ* կակիկոն *(V. գուցէ, վերականգնելի է* կա[ն]կիկոն. *ՆՀԲ-ն ունի* կանկեղոն՝ *«կարկին». Սուքրեանի ծնթ.-ն է.* «Յօր. *Կակիկոն»)*

13 *V* զլին, *S* զլիւն *փխ* զԼի[ւ]ն *(վեր.)*

14 *V* ՆՄԾ

15 *VS* հիւսիւս մղոն *փխ* հիւսի՛ս մղոն[ս] *(վեր.՝ ըստ այլոց, հմմտ. նաեւ 1 տող վերեւ)*

16 *V* ՆՇԾ

17 *V* Ն

18 *VS* յարմկանէն *փխ* յարմ[ն]կանէն *(վեր.)*

19 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի)*

20 *S* որ *փխ* որք *(V)*

21 *S* Ճենս *փխ* Ճէնս *(V. հմմտ. նախ. Ե.328, 330)*

22 *VS* Սագաստանեա[յ] *փխ* Սագաստանէա[յ] *(վեր.)*

23 *V* ԺԷ *[=եւթնեւտասն] փխ* հնգետասան *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի)*

24 *Գուցէ, վերականգնելի է՝* Բխուրա *փխն.* Բխուխ *(տե՛ս* Բխու**ր**ա ազգն → Բխու**խ** ազգն*)*

25 *VS* հիւսիւսո[յ] *փխ* հիւսիսո[յ] *(վեր.՝ ըստ այլոց)*

26 *V* յարեւմուս *փխ* յարեւմուտս *(վեր. Սուքրեանի)*

27 *S* քարն *փխ* կարն *(V. Սուքրեանի տողատակի ծանօթագրութիւնն է.* «Յօր. *Խոլոզմիկարն»)*

28 *S* Տուր *փխ* Տոտ *(V)*

29 *VS* [...] *[գրիչը բաց է թողել մօտ 5-6 տառի տեղ] փխ* Ծաւդիկք *(վեր.՝ ըստ համառօտի, որի բնագիրն է.* «Եւ ունի Սկիւթիա ազգս քառասուն եւ երեք (*DPv* չորս). Ծաւդիկք (*D* Ծաւդիք, *P* Սաւդիք, *v* Սօդիք), Թուխարիք (*AE* Թուխարիկք), Հեփթաղք, եւ այլ խուժադուժ անուանք»*)*

30 *V* ԽԿ

31 *V* ազգէտ *փխ* ազգէդ *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Դ → Տ***)*

32 *V* Հեփթախք *փխ* Հեփթաղք *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բանաւոր* **Ղ → Խ***)*

33 *VS* Դումոս *փխ* Ռումոս *(վեր. ըստ նախ. Բ.23-ի* (Ռիմոս). *տե՛ս ուշ երկաթագիր* **Ռ → Դ***)*

34 *V* Ծ

35 *VS* գետ *փխ* գետ[ք] *(վեր.՝ ըստ միւսների, տե՛ս օր.՝ ստորեւ, նախ. Ե.290, 291)*